ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2023 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2023 թ.-ին կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 12 հուշագրեր և պայմանագրեր.

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն
- Խուզեստանի գյուղատնտեսական գիտությունների և բնական պաշարների համալսարան (Իրանի Իսլամական Հանրապետություն)
- Լյուբլյանայի համալսարան (Սլովենիա)
- Տրուբիլինի անվան Կուբանի պետական համալսարան (ՌԴ)
- Տրնավայի ՍՍ Կիրիլ և Մեթոդիուսի համալսարան (Սլովենիա)
- Լայբնիցի անցումային տնտես.-ի գյուղ. զարգացման ինստիտուտ (ԼԱՏԳԶԻ),Հալլե (Զալե) (Գերմանիա)
- Գիտության դաշնային պետական բյուջետային հաստատություն Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սիբիրի ագրոկենսատեխնոլոգիաների դաշնային գիտական կենտրոն (ՌԴ)
- Վիտաուտաս Մագնուս համալսարան (Լիտվա)
- "Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի դաշնային գիտահետազոտական կենտրոն"գիտության դաշնային պետական բյուջետային հաստատության (ՌԳԱ ՍՊԴՀԿ) (ՌԴ)
- Գորգանի գյուղատնտեսական գիտությունների և բնական պաշարների համալսարան (Իրանի Իսլամական Հանրապետություն)
- Վառնայի տեխնիկական համալսարան (Բուլղարիա)
- Գայզենհայմի համալսարան (Գերմանիա)

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2023 թ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 41 պայմանագրեր, և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս այս տարի համագործակցել է 37 համալսարանների հետ:

2023 թ.-ին ՀԱԱՀ ՄԿԴ-ն ինչպես նախորդ տարիներին իրականացրեց և կազմակերպեց աշխատակիցների և ուսանողների արտագնա շարժունություն՝ ապահովելով 76 աշխատակիցների վերապատրաստումներ և դասախոսություններ եվրոպական 23 համալսարաններում:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		**Ներգնա**
	Հաստատություն	աշխա-տակից	ուսա-նող	աշխա-տակից
1.	Բնական պաշարների ու կենսաբանական գիտությունների համալսարան, Ավստրիա	3	1	3
2.	Վալյադոլիդի համալսարան, Իսպանիա	3		
3.	Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	6		
4.	Արևմտյան Ատտիկայի համալսարան, Հունաստան	3	1	
5.	Վիեննայի բնական ռեսուրսների և կենսագիտությունների համալսարան, Ավստրիա	6		
6.	Գայզենհայմի համալսարան, Գերմանիա	2	3	9
7.	Ալմերիայի համալսարան, Իսպանիա	1		
8.	Բրագանսայի համալսարան, Պորտուգալիա	2		1
9.	Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան, Իսպանիա	1		

10.	Աթենքի գյուղատնտեսական համալսարան, Հունաստան	2		4
11.	Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Ռումինիա	1		
12.	Տերամոյի համալսարան, Իտալիա	2	1	1
13.	Պիրեուսի համալսարան, Հունաստան	4	1	
14.	Կաշտելու Բրանկուի պոլիտեխնիկական ինստիտուտ	2		4
15.	Շչեցինի համալսարան, Լեհաստան	2	1	
16.	Վրոցլավի բնագիտական և կենսագիտական համալսարան, Լեհաստան	1		1
17.	Յագելոնյան համալսարան, Լեհաստան	1		
18.	Պանթեոնի հասարակագիտական և քաղաքագիտական համալսարան, Հունաստան	3		2
19.	Կրետեի համալսարան, Հունաստան	4		2
20.	Աթենքի ազգային տեխնիկական համալսարան, Հունաստան	5		
21.	Դեմոկրիտուսի համալսարան Թրակիայում, Հունաստան	9		
22.	Մարկեի պոլիտեխնիկական համալսարան, Իտալիա	1		
23.	Տուշայի համալսարան, Իտալիա	12		
24.	Շաբացի կիրառական գիտությունների ակադեմիա, Սերվիա			1
25.	Կրակովի գյուղատնտեսական համալսարան, Լեհաստան			1
	Ընդամենը	**76**	**8**	**29**





Այս տարի ևս, անգլերենի իմացության ցածր մակարդակի պատճառով ուսանողներին հատկացված բազմաթիվ շարժունության մրցույթային տեղեր մնացին թափուր: Այս համալսարանների մեջ են մտնում Հռոմի Սապիենցա համալսարանը, Ռուսեի Անգել Կնչևի անվան համալսարանը, Գրանադայի համալսարանը, Դուբրովնիկի համալսարանը Բրագանսայի պոլիտեխնիկական համալսարանը, Պովիսլանսկու համալսարանը և այլն:

Չնայած դրան, 2023 թ.-ի ընթացքում հայտարարված մրցույթների արդյունքում ութ նոր ուսանողներ ստացել են հնարավորություն գալիք կիսամյակում մասնակցելու շարժունությանը, որոնցից 1 ուսանող ստացել է հնարավորություն ուսումը շարունակելու Էստոնիայի կենսագիտական համալսարանում, 1-ը Սալոնիկի Արիստոտել համալսարանում, 2-ը Կաշտելու Բրանկուի պոլիտեխնիկական ինստիտուտում, 2-ը անցնել պրակտիկա Մարչեի պոլիտեխնիկական ինստիտուտում, և 2-ը Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Միաժամանակ նկատվում է նաև անգլերենին տիրապետող աշխատակիցների քանակի կտրուկ նվազում: ՄԿԴ-ն հետևողականորեն փորձում է հնարավորություն տալ այն աշխատակիցներին մասնակցել շարժունությանը, ովքեր կամ չեն մասնակցել, կամ ավելի վաղ են մասնակցեն դրան: Սակայն անգլերենին տիրապետող աշխատակիցների խիստ անբավարարության պատճառով ընտրող հանձնաժողովը ստիպված է լինում նույն աշխատակցին 2-3 անգամ մասնակցել շարժունության նույն տարում, ինչը ստիպված քայլ է ՄԿԴ-ի կողմից: Հակառակ դեպքում եվրոպական համալսարանները կդադարեն համագործակցությունը ՀԱԱՀ-ի հետ:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Էրազմուս+ ՀԳ2

«Աջակցություն անգլերենով դասավանդման նորարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI) ծրագրի շրջանակներում ապրիլի 3-12-ը ընկած ժամանակահատվածում Միջազգային կապերի եւ կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր Մարիամ Մովսիսյանը, Կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության բաժնի վարիչ Լիանա Վարդանյանը, Լեզվի ուսուցման կենտրոնի (ինքնաֆինանսավորվող) համակարգող Գառնիկ Սեւոյանը գործուղվել էին ՄԹ-ի Լիվերպուլի Ջոն Մուրսի անվան համալսարան՝ անգլերենը, որպես դասավանդման միջոց ուսումնական մոդուլների ստեղծման վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով: ՀԱԱՀ-ն պատասխանատու է EMI Oral

Teaching Skills Part 1 եւ ESP Pathway Program Module ուսումնական մոդուլների համար: Նախատեսվում է նաեւ հրատարակել 10 մոդուլը ներկայացնող ձեռնարկ:

Նոյեմբերի 21-ին, տեղի ունեցավ նախագծի իրազեկման հերթական միջոցառումը: Մասնակիցների թվում էին նախագծի ԵՄ համակարգող Ջերարդ Քալենը, Դրեզդենի տեխնիկական համալսարանի լեզվի կենտրոնի տնօրեն Կատյա Ուլմանը, նախագծի հայաստանյան համակարգող Թերեզա Խեչոյանը և այլոք: ՀԱԱՀ Կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության բաժնի վարիչ Լիանա Վարդանյանը ներկայացրեց նախագծի շրջանակում կատարված աշխատանքը, նշեց ձեռքբերումները: Քննարկվեցին անգլերենի զարգացմանը միտված դասընթացների եւ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ առաջարկները: Նախագծի շրջանակում մշակվել է 9 մոդուլ, որոնցից երկուսի՝ «EMI բանավոր դասավանդման հմտություններ» եւ «ESP/ անգլերենը հատուկ նպատակների համար», դասավանդումը Ագրարայինում կմեկնարկի դեկտեմբերի 1-ին:

«Հայաստանում և Ղրղզստանում աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակում և հետազոտական ցանցերի ամրապնդում» (GeoTAK) նախագծի շրջանակում հունվարի 12-ին Իսպանիայում եւ Բելգիայում անցած վերապատրաստման մասնակիցները գործընկերներին եւ ուսանողներին փոխանցեցին ունեցած փորձը:

«ԵՏ տեխնոլոգիաները բնական ռեսուրսներում» թեմայով վերապատրաստում անցնելու եւ համակարգող աշխատաժողովին մասնակցելու համար Ջրային եւ հողային ռեսուրսների կառավարման ամբիոնի վարիչ, ծրագրի համակարգող/կատարող-հետազոտող Գուրգեն Եղիազարյանը 2023 թ. հունիսի 4 – 10-ը, իսկ դոցենտ, ծրագրի կատարող-հետազոտող Նաիրա Ալոյանը եւ մասնագետ, ծրագրի վարչական աշխատակից Արմինե Համբարձումյանը մայիսի 29-ից հունիսի 10-ը մեկնեցին Բիշքեկ:

«Շրջակա միջավայրի մշտադիտարկում եւ ռիսկերի կառավարում» դասընթացի հիմնական թեման շատ հետաքրքիր էր բոլոր մասնակիցների համար, քանի որ անցկացվել են տեսական եւ գործնական պարապմունքներ, դաշտային աշխատանքներ են իրականացվել աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների, գեոդեզիայի ժամանակակից մեթոդների, երկրատարածական վերլուծության, հեռահար զոնդավորման տվյալների եւ անօդաչուների (ԱԹՍ) օգտագործմամբ:

Հունիսի 19-25-ը Հողային եւ ջրային ռեսուրսների կառավարման ամբիոնի վարիչ, գ.գ.դ., պրոֆեսոր Գուրգեն Եղիազարյանը, նույն ամբիոնից՝ տ.գ.թ., դոցենտ Նաիրա Ալոյանը եւ Սերյոժա Կարապետյանը ԳեոՏակ ծրագրի շրջանակում այս անգամ գործուղման էին մեկնել Շվեդիա՝ Ստոկհոլմի թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ: Քննարկումների թեման էր «Նորարարությունն ու ձեռներեցությունը երկրատեղեկատվական համակարգերի միջոցով»: Դասախոսությունների, գործնական պարապմունքների ընթացքում մանրակրկիտ դիտարկվել է գիտելիքի եռանկյունին՝ կրթություն-հետազոտություն-նորարարություն եռամիասնությունը: Մասնավորապես դիտարկել-վերլուծել են նորարարություն եւ ձեռներեցություն, բիզնես մոդելներ, հաճախորդների եւ շուկայի վերլուծություն դրվագները

Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում և Ուկրաինիայում. կրթությունից դեպի էկոլոգիա (AFISHE)

Հունվարի 25-ին մեկնարկեց նախագծի առաջին աշխատաժողովը: Եռօրյա աշխատանքային հանդիպմանը մասնակցում էին Դուբրովնիկի (Խորվաթիա), Պորտոյի (Պորտուգալիա), Սլովակիայի Նիտրայի գյուղատնտեսության եւ առցանց՝ ուկրաինական երկու՝ Սումիի ազգային ագրարային եւ Ջրային եւ բնապահպանական ճարտարագիտության ազգային համալսարանները: Հստակեցվել են անելիքները, մոդուլները, դրանց կատարման ընթացակարգը եւ ժամանակացույցը:

Հունվարի 27-ին եռօրյա աշխատանքների ավարտական փուլի ընթացքում քննարկված հիմնական հարցերը նվիրված էին տեղեկատվության փոխանակման, հանրության իրազեկման խնդիրներին:

Մարտի 16-ին տեղի ունեցավ գործատուների հետ հանդիպում: Հանդիպման հիմնական նպատակն էր վերհանել այն բոլոր առանցքային խնդիրները, որոնց, ըստ գործատուների, բախվում են ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսության ոլորտի աշխատողները եւ պատկերացում կազմել, թե ինչ մասնագետների կարիք կա նշված ոլորտներում: Հանդիպումը նաեւ միտված էր համալսարան-ձեռնարկություններ-հետազոտություն համագործակցության հնարավորությունների քննարկմանը: Գործատուները ներկայացրեցին, թե ինչպիսի կարողություններով եւ հմտություններով մասնագետների կցանկանան տեսնել իրենց կազմակերպություններում եւ ինչ

ուղղություններ է անհրաժեշտ ներառել ծրագրի շրջանակում ստեղծվող «Ակվակուլտուրա եւ ձկնային տնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագրում:

Ծրագրի երկրորդ հանդիպումը կայացավ Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանում (Նիտրա) հունիսին: Հանդիպումը մեկնարկեց գործընկեր հաստատությունների՝ ծրագրի առաջին վեց ամսում կատարած աշխատանքների նարկայացմամբ: Այնուհետեւ աշխատանքային յոթ փաթեթների պատասխանատուները ներկայացրին ինչպես իրականացված, այնպես էլ նախատեսվող գործողությունները՝ ըստ նախագծի ժամանակացույցի:

VISEGRAD+

Մայիսի 16-ին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում բացվեց Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն՝ «Փափուկ հմտությունների զարգացումը որպես զբաղվածության հիմնական գործիք» նախագծի շրջանակում: Ըստ էության, միջոցառումը 2022 թ. հունվարին մեկնարկած եւ այս տարվա հունիսին ավարտվող նախագծի փակումն էր, որ նշանավորվեց նշված կենտրոնի բացմամբ, որտեղ ՀԱԱՀ ուսանողները եւ գյուղատնտեսության ոլորտում գործող մասնագետները կստանան աշխատաշուկայում հաջողելու համար կարեւոր փափուկ հմտություններ: Նախագծի շրջանակում մշակված մոդուլների վերաբերյալ ներկայացումներով հանդես եկան Ագրարային համալսարանի վերապատրաստված մասնագետները:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին և վերապատրաստումներ: 2023 թ.-ին գիտաժողովների և համաժողովների, ինչպես նաև վերապատրաստումների են մասնակցել ՀԱԱՀ 62 աշխատակիցներ

- Հայաստանի և Արգենտինայի միջև տեխնիկական համագործակցություն» ծրագրի շրջանակում վերապատրաստում, Արգենտինա - 3 աշխատակից
- 21T-1AO47 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում վերապատրաստում, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն – 1 աշխատակից

- Էրազմուս+ ՀԳ2 GeoTAK ծրագրի շրջանակում վերապատրաստում – 4 աշխատակից, Իսպանիա, Շվեդիա, Ղրղզստան
- Էրազմուս+ ՀԳ2 SMARTI ծրագրի շրջանակում վերապատրաստում, Մեծ Բրիտանիա – 3 աշխատակից
- Էրազմուս+ ՀԳ2 T-Green ծրագրի շրջանակում վերապատրաստում, Հունաստան – 3 աշխատակից
- Էրազմուս+ ՀԳ2 AFISHE ծրագրի շրջանակում հանդիպում, Սլովակիա - 3 աշխատակից
- "Quality Assurance of Cross-border trade and Transportation of Food and Agricultural products by China-Europe Railwey Express" սեմինար, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն – 9 աշխատակից
- «100 Գաղափար ԱՊՀ երկրների համար» միջազգային երիտասարդական մրցույթ-ցուցահանդես, Բելառուս – 3 աշխատակից
- "The 4th Egyptian International Conference on Microbiota & Microbiome in Health and Disease" գիտաժողով, Եգիպտոս – 3 աշխատակից

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2023 թ.-ին ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Գործուղումներ

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	8	76
Erasmus+ ՀԳ2		13
Այլ	2	43
Ընդամենը	**10**	**132**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ի կողմից տարածվում են սոց. ցանցերով և ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

2023 թ. փետրվարին ՄԿԴ-ն ակտիվորեն մասնակցեց Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մրցույթին, պատրաստելով համապատասխան փաստաթղթերը գործընկեր համալսարանների հետ: Միաժամանակ ՀԱԱՀ-ն, որպես գործընկեր, մասնակցել է 3 Էրազմուս+ կարողություններին միտված ծրագրերին, իսկ որպես համակարգող 1 ծրագրի:

ՄԿԴ-ն մասնակցել է նաև ԵՄ-ի կողմից կազմակերպված Էրազմուս+ տեղեկատվական վեբինարներին, ինչպես նաև Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպումներին, որոնցից մի քանիսին դասընթացավար է հանդիսացել ՄԿԴ պետ Գարեգին Համբարձումյանը:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակներում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ:

Այս տարի ևս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվում են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ. Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր և այլն: 2023 թ.-ին ՄԿԴ-ի կողմից տեղադրվել են շուրջ 100 նյութեր, որոնցից 38-ը եղել են Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 7-ը նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 36-ը շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրվող առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության

գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանը, 2023 թ.-ից լինելու Հայաստանում Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագիտական խմբի անդամ (HERE Armenia), ակտիվերոն մասնակցել է այդ խնբի աշխատանքներն, մասնավորապես, մշակել և ներկայարել է 2 TAM (Technical assistance missions) նախագծեր, որինցից մեկը հաստատվել է SPHERE (Support and Promotion for Higher Education Reform Experts) Team-ի կողմից, իոկս մյուսի պատասխանը դեռ ընթացի մեջ է: Բացի այդ, Գ. Համբարձումյանը մասնակցել է նաև HERE Armenia խմբի կողմից կատարված ուսումնասիրությանը, ինչը վերաբերել է բուհերում կարիքների վերհանմանը:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ուսանողների և աշխատակիցների շրջանում բարձրացնել օտար լեզվի իմացության մակարդակը: Շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:
2. Դասախոսների շրջանում ուժեղացնել միջազգային ծրագրեր կամ ծրագրային առաջարկներ գրելու կարողությունները: Դա անհրաժեշտ է այն տեսակետից, որ նեղ մասնագիտական ծրագրերին դիմելու դեպքում կարողանան կազմել և ներկայացնել ծրագրային փաթեթներ:
3. Ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա և տեղեկատվական նյութեր: Օտարերկրացի տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան:

S	W
• միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի	• օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների ոչ բավարար քանակ

վերաբերյալ տեղեկատվության տարածում • ՄԿԴ աշխատակցիների ակտիվ գործունեություն	• համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • ոչ բավարար սեփական միջոցներ տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում
O	T
• ագրարային ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից	• ուսանողների թվաքանակի պակասում • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • պատերազմի հետևանքով Հայաստանի՝ որպես անվտանգ երկիր կարգավիճակի թուլացում • վիզայի ստացման մեծ դժվարություններ՝ կապված դեսպատատներում հանդիպման օրվա բացակայության հետ